# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՐԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՑԱՆՑՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01

ք. Երևան «24» Հունվար 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս «Յուքոմ» ՓԲԸ կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, որը գործում է «Յուքոմ» ՓԲԸ-ի լիազորագրի հիման վրա(այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն ընդհանուր գինը կազմում է 84000000 (ութսունչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն

չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված

ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Յուքոմ» ՓԲԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ՀՀ ք.Երևան, Տերյան 19, բն.4 |
| ՀՎՀՀ 02647057 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016 | Հ/Հ 1570043102134100 |
| Հ/Հ 900011054013 | ՀՎՀՀ 00024873 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | Կորպորատիվ վաճառքի |
| գործառնական վարչություն | բաժնի ղեկավար |
| Գլխավոր քարտուղար | |
| Է. Գևորգյան _____ | Կ. Ասատուրյան _____ |
| /ստորագրություն/ Կ.Տ/ | /ստորագրություն/ Կ.Տ/ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը հակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 24 » Հունվար 2020թ. կնքված*
*ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը |
| 1 | 72411100/502 | Սույն ծառայության մատուցման տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև | դրամ | 84,000,000 | 1 |

## ՀՀ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ

ՀՀ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցը (այսուհետ՝ ցանց) ապահովում է էլեկտրոնային կապը վերադաս մարմնի և իր ստորաբաժանումների միջև:
Ցանցը պետք է ապահովի տեղեկատվության փոխանակման շուրջօրյա հնարավորություն, ներառյալ ոչ աշխատանքային օրերը և ժամերը: Ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և չպետք է լինի կապված ոչ մի այլ համակարգչային ցանցերի հետ:
Կատարողը պետք է ապահովի ցանցում տվյալների փոխանցման արագությունը, անվտանգությունը և գաղտնիությունը:
Կատարողը պետք է ապահովի նաև ցանցի շուրջօրյա սպասարկումը և տեխնիկական աջակցումը:
Կատարողը պետք է իրականացնի ցանցի նախագծման, կառուցման և հետագա սպասարկման ծառայությունները: Կատարողը ցանցը նախագծելիս պետք է կիրառի արագագործ, ապահով և ժամանակակից տեխնոլոգիաներ: Ցանցի նախագծման ժամանակ կատարողը պետք է ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի հետ համաձայնեցնի կիրառվելիք տեխնոլոգիաները:
Կատարողը պետք է որոշի, թե ինչպիսի արտաքին սարքավորումներ և ծրագրեր են անհրաժեշտ ցանցը միացնելու կամ վերակառուցելու համար, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի հետ համաձայնեցնի նախագծի նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հիմնավորումները և ապահովի նախագծի ներդրման ընթացքը:

## Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ
## /Օպտիկամանրաթելային կապի միջոցներով տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ/

Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» (տվյալների փոխանակման) մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ՀՀ ՊԵԿ-ին ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ ՀՀ ՊԵԿ ներքին ցանցային ենթակառուցվածքում:

### Տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի տեխնիկական բնութագիր

| Անվանում | Նկարագրությունը |
|---|---|
| Առանձնացված կապուղի | 2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ կապի ծառայությունների մատակարար ընկերություններից (այսուհետ՝ ԿԾՄ) ք. Երևան Ահարոնյան 12/3-ից (հիմնական հանգույց) դեպի ք. Դիլիջան պարզ լիճ 4 (պահուստային հանգույց) առնվազն Հավելված 1-ում նշված արագությամբ: * |
| | 2 առանձնացված օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում 2 իրարից անկախ ԿԾՄ-ի կողմից հիմնական հանգույցի և հավելված 2-ի կետերի միջև: * |
| | Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում և ցանցային ուղղորդում Հավելված 3-ի, 4-ի կետերի և հիմնական հանգույցի միջև: |
| Պայմաններ | "routing with multiple redundancy paths and resiliency" հիմնական, պահուստային հանգույցների և Հավելված 2,3,4-ի կետերի միջև: |
| | ԿԾՄ պետք է ապահովի առնվազն Հավելված 2,3,4-ում նշված համապատասխան արագություններով երաշխավորված, երկկողմանի(սիմետրիկ) տվյալների փոխանցման հնարավորություն ցանկացած կետում:<br>Հավելված 1,2,3,4-ում նշված հասցեներում տրամադրել առանձնացված VLAN հեռախոսակապի համար: |
| | • Անհրաժեշտ սարքավորումների տրամադրում, տեղադրում, կարգաբերում և սպասարկում<br>• Ապահովել ցանկացած կետում ցանկացած VLAN Id օգտագործման հնարավորությունը<br>• տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների «Leyer2» ենթացանցերի<br>• ապահովել համակցում վերոնշյալ «Leyer2» խմբերի միջև<br>• ապահովել ցանկացած «Leyer2» պրոտոկոլների թափանցելիություն ցանկացած կետում |
| Լայնաշերտ ինտերնետ հասանելիության | Ինտերնետ կապի տրամադրում հիմնական հանգույց առնվազն 300mb/s արագությամբ, ինչպես նաև առնվազն 500 mb/s արագությամբ ՀՀ տարածքում գործող .am տիրույթներում:<br>ԿԾՄ-ն պետք է տրամադրի 2 ական x.x.x.x/26 և 2 ական x.x.x.x/28 (real ip) հասցեների տիրույթ: |

| | |
|---|---|
| ծառայություն | |
| Որակի պահանջներ | Պայմանագրի կատարման ընթացքում՝<br>• հավելված 1,2,3 -ի որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 4-ը: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամանակով;<br>• հավելված 4-ի որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) քանակը չպետք է գերազանցի 6-ը : Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամանակով: |
| | Մեկ ամսվա ընթացքում հավելված 1,2,3 -ի որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն, իսկ հավելված 4-ի որևէ կետում՝ 240 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար: |

* Նշված հանգույցների միջև յուրաքանչյուր ԿԾՄ պետք է տրամադրի տեղեկատվական ցանց՝ չօգտագործելով մյուս ԿԾՄ-ի տեղեկատվական ցանցը (կապուղի, հանգույց և այլն):

*Հավելված 1*

| Հ/Հ | Անվանումը | Հասցեն | Արագություն |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն, Ուսումնական կենտրոն | ք.Երևան, Աիարոնյան փող. 12/3 | 5Gb/s |
| 2. | ՀՀ ՊԵԿ պահուստային հանգույց | ք.Դիլիջան, Պարզ լիճ փող. 5 | 5Gb/s |

*Հավելված 2*

| Հ/Հ | Անվանումը | Հասցեն | Արագություն |
|---|---|---|---|
| 1. | Բավրա մաքսային կետ-բաժին | ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա | 100Mb/s |
| 2. | Բագրատաշեն մաքսային կետ-բաժին, ՕՀՎ 27 բաժին/Բագրատաշեն, Գոգավան/ | ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն | 100Mb/s |
| 3. | Գոգավան-Պրիվոլնոյե մաքսային կետ-բաժին | ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգավան | 100Mb/s |
| 4. | Մեղրի մաքսային կետ-բաժին | ՀՀ Սյունիքի մարզ, գ.Կարճևան Մայրուղի-4 | 100Mb/s |
| 5. | Այրում-Ջիլիզա մաքսային կետ-բաժին | գ.Այրում Երկաթուղային 20, ք.Ալավերդի Մադան թաղամաս (Ջիլիզա) | 50Mb/s |
| 6. | Կենտրոնական ապարատ | ք.Երևան, Մ.Խորենացու-3. 7 և 7ա | 2Gb/s |
| 7. | Արարատյան մաքսատուն-վարչություն, Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն, Նախաբացթողումային | ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10 | 1Gb/s |

| | | | |
|---|---|---|---|
| | հսկողության վարչություն | | |
| 8. | Արևմտյան մաքսատուն-վարչություն, ՕՀՎ 23 բաժին/Զվարթնոց/ | Զվարթնոցե օդանավակայան Երևան – 42 | 100Mb/s |
| 9. | Ավտոտրանսպորտային միջոցների մաքսազերծման միասնական կենտրոն | Շիրակի մարզ Գյումրի համայնքի Թբիլիսյան խճուղի 2/14 | 100Mb/s |

*Հավելված 3*

| Հ/Հ | Անվանումը | Հասցեն | Արագություն |
|---|---|---|---|
| 1. | Խոշոր և միջին ՀՎՏՎ, Կազմակերպման և հսկողության վարչություն, ՀՎՍՎ թիվ 20 բաժին /ԽՄՀՎՀՏՎ/, Փոքր ՀՎՏՎ վերլուծ. թիվ 1,2,3. ՀՎՍՎ թիվ 1 բաժին/Արաբկիր/ | ք.Երևան, Կոմիտաս-35 | 300Mb/s |
| 2. | ՀՎՍՎ թիվ 3 բաժին/Կենտրոն/, Քննչական վարչություն, Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն, ՕՀՎ 6-րդ բաժին, ՕՀՎ 8 բաժին, ՕՀՎ 9 բաժին/Կենտրոն/ | ք.Երևան,Դեղատան-3 | 200Mb/s |
| 3. | ՀՀ ՊԵԿ Ներքին անվտանգության վարչություն | ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1 շենք | 300Mb/s |
| 4. | ՀՀ ՊԵԿ Ներքին անվտանգության վարչություն/շնագիտական կենտրոն/ | ք.Երևան, Հույսիսային փ. 6 | 30Mb/s |
| 5. | ՀՀ ՊԵԿ Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների Մ/ՄՏ | ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ. | 30Mb/s |
| 6. | ՀՀ ՊԵԿ Իրավաբանական վարչություն, ՀՎՍՎ թիվ 2 բաժին/Էրեբունի/, ՕՀՎ 13 բաժին/Էրեբունի/ | ք.Երևան, Ս. Դավիթի 87ա | 100Mb/s |
| 7. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 3 բաժին/Կենտրոն/, Փոքր ՀՎՏՎ թիվ 4 բաժին/Մաշտոց/, ՀՎՍՎ թիվ 4 բաժին/Մաշտոց/, ՕՀՎ 10 բաժին/Շենգավիթ/, ՕՀՎ 11 բաժին/Մաշտոց/, ՕՀՎ 12 բաժին/Արաբկիր/ | ք.Երևան, Շինարարների փ. 3/1 | 100Mb/s |
| 8. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 1 բաժին /Արաբկիր/, Փոքր ՀՎՏՎ թիվ 5 բաժին/Նոր-Նորք/, ՀՎՍՎ թիվ 5 բաժին/Նոր-Նորք/, ՕՀՎ 14 բաժին/Նոր-Նորք/ | ք.Երևան, Մոլդովական-41/3 | 100Mb/s |
| 9. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 2 բաժին/Էրեբունի/, Փոքր ՀՎՏՎ թիվ 6 բաժին/Շենգավիթ/, ՀՎՍՎ թիվ 6 բաժին/Շենգավիթ/ | ք.Երևան, Մանթաշյան փ. 55 | 100Mb/s |
| 10. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 11 բաժին /Գյումրի/, ՀՎՍՎ թիվ 11 բաժին/Գյումրի/, ՕՀՎ 22 բաժին/Գյումրի/ | ք.Գյումրի, Հովսեփյան-1 | 100Mb/s |

*Հավելված 4*

| Հ/Հ | Անվանումը | Հասցեն | Արագություն |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ ՊԵԿ ,Շիրակ օդանավակայան մաքսային կետ-բաժին | ՀՀ Շիրակի մարզ, «Շիրակ» օդանավակայան | 30Mb/s |
| 2. | ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչություն | ք.Գյումրի, Խորենացի-21 | 60Mb/s |
| 3. | ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչություն | ք.Վանաձոր, Մոսկովյան-44 | 60Mb/s |
| 4. | ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչություն | ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Շաքե | 60Mb/s |
| 5. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 7 բաժին /Աշտարակ/, ՀՎՍՎ թիվ 7 բաժին/Աշտարակ/, ՕՀՎ 24 բաժին/Աշտարակ/ | ք.Աշտարակ, Պռոշյան 29 | 60Mb/s |
| 6. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 8 բաժին /Արմավիր/ | ք.Արմավիր, Չարենցի-24 | 35Mb/s |
| 7. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 9 բաժին /Արտաշատ/, ՀՎՍՎ թիվ 9 բաժին/Արտաշատ/, ՕՀՎ 25 բաժին/Արտաշատ/ | ք.Արտաշատ, Օգոստոսի-23, 83 | 60Mb/s |
| 8. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 10 բաժին /Գեղարքունիք/, ՀՎՍՎ թիվ 10 բաժին/Գավառ/ | ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4 | 60Mb/s |
| 9. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 18 բաժին/Գորիս/ | ք.Գորիս, Տաթևանցու-9 | 60Mb/s |
| 10. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 12 բաժին /Եղեգնաձոր/, ՀՎՍՎ թիվ 12 բաժին/Եղեգնաձոր/, ՕՀՎ 15 բաժին/Եղեգնաձոր/ | ք.Եղեգնաձոր, Նարեկացի-8/3 | 60Mb/s |
| 11. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 8 բաժին /Արմավիր/, ՀՎՍՎ թիվ 8 բաժին/Արմավիր/ | ք.Էջմիածին, Նարդոսի 11 | 60Mb/s |
| 12. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 13 բաժին /Իջևան/, ՀՎՍՎ թիվ 13 բաժին/Իջևան/, ՕՀՎ 16 բաժին/Իջևան/ | ք.Իջևան, Անկախության 12 | 60Mb/s |
| 13. | ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 13 (Նոյեմբերյանի բաժին) | ք.Նոյեմբերյան, Երևանյան 4 | 25Mb/s |
| 14. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 14 բաժին/Կապան/, ՕՀՎ 19 բաժին/Սյունիք/ | ք.Կապան, Մինասյան փողոց 20 ա | 50Mb/s |
| 15. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/ | ք.Մեղրի,Անդրանիկի-2/11, 2/12 | 25Mb/s |
| 16. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 15 բաժին /Կոտայք/, ՀՎՍՎ թիվ 15 բաժին/Կոտայք/, ՕՀՎ 17 բաժին/Կոտայք/ | ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1 | 60Mb/s |
| 17. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 15 բաժին /Կոտայք/, ՀՎՍՎ թիվ 19 բաժին/Հրազդան/, ՕՀՎ 20 բաժին/Հրազդան/ | ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2 | 60Mb/s |
| 18. | ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 10 (Մարտունու բաժին) | ք.Մարտունի, Շահումյան-2 | 20Mb/s |
| 19. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 10 բաժին /Գեղարքունիք/, ՀՎՍՎ թիվ 17 բաժին/Սևան/, ՕՀՎ 26 բաժին/Սևան/ | ք.Սևան, Սայաթ-Նովա-1/1 | 60Mb/s |
| 20. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/ | ք.Սիսիան, Սիսակյան-41գ | 25Mb/s |
| 21. | ՀՀ ՊԵԿ Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Վանաձոր/, ՀՎՍՎ թիվ 16 բաժին/Վանաձոր/, ՕՀՎ 21 բաժին/Վանաձոր/ | ք.Վանաձոր, Վարդանանց 11 | 60Mb/s |
| 22. | ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 16 (Թումանյանի բաժին) | ք.Ալավերդի, Թումանյան 1ա | 25Mb/s |
| 23. | ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 16 (Տաշիրի բաժին) | ք.Տաշիր, Ջահուկյան 6 | 25Mb/s |
| 24. | ՀՀ ՊԵԿ ԳԿՎ Ավտոտնտեսություն | ք. Երևան, Սևանի 104/2 | 10Mb/s |
| 25. | ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 21 բաժին | Ք.Երևան, Արարատյան 90 | 10 Mb/s |

| Ծառայության մատուցման ժամկետը |
| --- |
| Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 350 օրացուցային օրվա ընթացում: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Տերյան 19, բն.4
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի
բաժնի ղեկավար

Կ. Ասատուրյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

*Հավելված 2*
*« 24 » Հունվար 2020թ. կնքված*
*ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 2.1*
*« 24 » Հունվար 2020թ. կնքված*
*ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/01 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն